

# ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶԸ՝ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

30.12.2019



## Միրելի՛ պունեցիներ

Մրտանց ու անկեղծորեն շնորհավորում եմ բոլորիդ Նոր տարվա ու Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ:

Ցանկանում եմ, որ կյանքի կոչվեն Ամանորի շեմին պահած ձեր երազանքները, որ բոլորիդ օջախներում թագավորեն սերը, ջերմությունը, բարեկեցությունը, առողջությունն ու խաղաղությունը:

Հին տարին ճանապարհելիս՝ հիշում ենք նրա ընթացքում գրանցած հաջողությունները, ամփոփում ձեռքբերումներն ու հաստատուն հույսով եւ հավատով, որ գալիք տարում հասնելու ենք ավելիին՝ ծրագրեր կազմում: Իսկ դրա հիմքն արդեն իսկ տեսանելի դրական առաջընթացն է մեր հանրապետությունում եւ մասնավորապես՝ մեր մարզում: 2019-ը Սյունիքի համար բեղմնավոր էր ու լի իրադարձություններով: Ու դա նաեւ ձեր համբերատարության, վստահության, աշխատանքի, համատեղ ջանքերի ու նվիրվածության շնորհիվ էր, որի համար շնորհակալություն եմ հայտնում:

Կարծում եմ՝ մեր բոլոր համայնքներում տեսանելի են ձեռքբերումները, եւ 2020 թվական թեւակոխում ենք զարգացման նոր ծրագրերով, դրանց իրականացման հստակ հնարավորություններով ու արդեն հիմք ունեցող փոփոխություններով, որոնք շարունակություն եւ արդյունքներ կունենան:

Մենք վստահությամբ ենք նայում վաղվան ու լավատեսության համար հիմքեր ունենք, իսկ նորի իրականացման ու առավել ծաղկուն միջավայրի՝ համայնքի, մարզի, երկրի կառուցման բանալին, անշուշտ, եղել է եւ կլինի մեր ջանադիր աշխատանքը՝ հանուն բարիքի, արդարության եւ հայրենիքի առաջընթացի:

Միրելի՛ հայրենակիցներ, կրկին շնորհավորելով տարեմուտի կապակցությամբ՝ մաղթում եմ, որ Սուրբ Ծննդյան տոնի օրհնության գորությունը ուղեկցի ձեզ ողջ տարվա ընթացքում, եւ օգնի հաղթահարել դժվարությունները, արժանապատվությամբ լուծել բոլոր խնդիրները:

**Շնորհավո՛ր Ամանոր եւ Սուրբ Ծնունդ:**